



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

25 օգոստոսի 2011 թվականի N 112-Ա

ք. Հրազդան

Է. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի օգոստոսի 23-ի N 332-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի Ն. Վանյանի անվան N 5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 7 որոշումը՝

ԿԱՐԳԱԴԻՐՈՒՄ ԵՄ.

1. *Էմին Եղիազարյանին* 2011 թվականի օգոստոսի 25-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի Ն. Վանյանի անվան N 5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ԵԱՀԳԱԼԴՅԱՆ